ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 4 դեկտեմբերի 2018թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Կարեն Աբրեյան
Անդամներ	Լուսինե Սիմավոնյան
	Անահիտ Դավթյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք սանիտարական կերամիկայի և ծորակների նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 352 000 ՀՀ դրամ, ինչպես նաև չափաբաժիններից յուրաքանչյուրի նախահաշվային գինը, որը «զուգարանակոնք» չափաբաժնի համար կազմում էր 224 000 ՀՀ դրամ, «լվացարան» չափաբաժնի համար՝ 88 000, իսկ «ծորակներ» չափաբաժնի համար՝ 40 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանը (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 66ա շենք, բն. 55, էլ՝ փոստ՝ amnorog@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեցեց, որ մասնակիցն առաջարկում է պայմանագիրը կատարել 298 010 ՀՀ դրամ ընդհանուր գնով, այդ թվում՝ 1-ին չափաբաժնի մասով՝ 208 250, 2-րդ չափաբաժնի մասով՝ 67 960, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ 21 800 ՀՀ դրամ գներով:

Հանձնաժողովը գնահատեց մասնակցի ներայացրած գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանին՝ որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովը նաև արձանագրեց, որ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկելու անհրաժեշտություն չկա:

2. ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշներ սահմանված չեն, հետևաբար առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այդ չափանիշները հիմնավորող փաստաթղթեր չեն պահանջվում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանին ճանաչել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից Ա/Ձ Գևորգ Խուրշուդյանի հետ կնքել սանիտարական կերամիկայի և ծորակների մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Կարեն Աբրեյան

Հանձնաժողովի անդամներ _____ Լուսինե Սիմավոնյան

_____ Անահիտ Դավթյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան